ՀԱՅՏ

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

Ծրագրի անվանումը	*Ալավերդի համայնքի Թումանյան փողոցի մայթերի, համայնքի ճանապարհների և կանգառների վերանորոգում ու նոր կանգառների կառուցում*
Մարզ	*ՀՀ Լոռու մարզ*
Համայնքը /համայնք-ները	*Ալավերդի համայնք, Ալավերդի քաղաք, Աքորի, Հաղպատ, Կաճաճկուտ, Ջիլիզա, Ծաղկաշատ, Ակներ, Սանահին, Մադան գյուղեր*
Համայնքի /բնակա-վայրի հեռավորու-թյունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	*Համայնքի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից 169կմ է, մարզկենտրոն Վանաձորից՝ 40 կմ:*
Համայնքի /բնակա-վայրի բնակչությունը	*Համայնքում հաշվառված է 24599 մարդ:*
Սահմանամերձ, բարձր լեռնային համայնք /բնակավայրի	*Ալավերդի համայնքը սահմանամերձ է Վրաստանի Հանրապետությանը*
Համայնքի բնակավայրի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիճ տեղեկատվություն	Ալավերդի համայնքի 81 կմ երկարությամբ ներհամայնքային ճանապարհից ասֆալտապատ է 52 կմ, որից լավ վիճակում է գտնվում ընդամենը 19,5 կմ հատվածը: Ներհամայնքային ճանապարհի 23 կմ երկարությամբ հատվածը չունի ծածկույթ: Ներհամայնքային ճանապարհների կապիտալ վերանորոգման աշխատանքներ վերջին քսանամյակում կատարվել են միայն 2018 թվականին՝ վերանորոգվել է համայնքի Թումանյան փողոցի 2,5 կմ երկարությամբ ճանապարհը: Համայնքում ջրամատակարարման արտաքին և ներքին ցանցերը գտնվում են բարվոք վիճակում, բացառությամբ սահմանամերձ Ջիլիզա գյուղի, որի ջրամատակարարման համակարգը վատ վիճակում է: Համայքնի բոլոր բնակավայրերը էլեկտրաֆիկացված են: Համայնքի կազմում ընդգրկված 6 բնակավայրերից միայն 3 բնակավայր է գազաֆիկացված: Բնակավայրերից 3-ում կան ոռոգման ջրագծեր, որոնց մի մասը վատթար վիճակում է և 2 բնակավայրերում առկա է կոյուղի, սակայն չկան կոյուղու մաքրման կայաններ: Համայնքի կազմում գտվող 5 բնակավայրում կազմակերպվում է գիշերային լուսավորություն: Համայնքի ներսում լուսավորված ճանապարհների երկարությունը 21,6 կմ է: Լուսավորության համակարգը ամեն տարի թարմացվում է՝ հին լուսատուները փոխարինում են նոր էներգախնայող լուսատուներով, վերանորոգվում են հին լուսասյուները և տեղադրվում են նորերը:
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը	Ալավերդու ներհամայնքային ասֆալտապատ փողոցները և մայթերը կառուցվել են 1960-1970-ական թվականներից սկսած: Ասֆալտապատ ճանապարհների և մայթերի նորմալ շահագործման համար անհրաժեշտ է 6-8 տարին մեկ կատարել կապիտալ վերանորոգման աշխատանքներ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ալավերդի համայնքի բոլոր ճանապարհները և մայթերը կառուցված են պատնեշների վրա, այդ ճանապարհների ու մայթերի վերանորոգումը ավելի կարճ ժամանակահատված և ֆինանսական ավելի մեծ ծախսեր է պահանջում: Համայնքապետարանը չունի բավարար միջոցներ ճանապարհների կապիտալ

վերանորոգում իրականացնելու համար, սակայն ամեն տարի իրականացնում է ճանապարհների ընթացիկ նորոգում՝ ապահովելով դրանց անցանելիությունը:

2018 թվականին ՀՀ Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության ֆինանսներով հիմնանորոգվել է Ալավերդի համայնքի Թումանյան փողոցի 2,5 կմ երկարությամբ ճանապարհը և մայթերին տեղադրվել են նոր եզրաքարեր: Հին եզրաքարերի ապամոնտաժման և նորի տեղադրման արդյունքում՝ ճանապարհի հարակից, առանց այդ էլ անբարեկարգ վիճակում գտնվող մայթերը դարձել են գրեթե անանցանելի:

Թումանյան փողոցում են տեղակայված մի քանի տասնյակ պետական և մասնավոր հիմնարկ-ձեռնարկություններ, սրճարաններ, բանկեր, վարկային կազմակերպություններ, խանութներ, կրպակներ, ինչի արդյունքում այս մայթերով երթևեկողների թիվը մեծ է: Քանի որ մայթերը անբարեկարգ են և գրեթե անանցանելի, հետիոտնը անկարող է անցնել, ինչի պատճառով նրանցից շատերի անցուդարձը փողոցով է, որն էլ խանգառում է թե մեքենաների երթևեկությանը, թե վտանգում հետիոտնի կյանքը: Առաջացած այս խնդիրներն էլ առաջնային և հրատապ են դարձնում Թումանյան փողոցի մայթերի վերանորոգման խնդիրը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում ներառված Սանահինի պատմական Քարե կամուրջը, որի հանդեպ առանձնակի մեծ է զբոսաշրջիկների հետաքրքրությունը, նույնպես գտնվում է Թումանյան փողոցում: Այդ պատճառով համայնք այցելող զբոսաշրջիկները նույնպես ստիպված են լինում քայլել այդ մայթերով, ինչը իր բացասական ազդեցությունն է ունենում համայնքում զբոսաշրջության զարգացման վրա:

Համայնքի տարածքում գտնվող, այդ թվում Թումանյան փողոցի կանգառները ենթակա են վերանորոգման: Համայնքի բոլոր բնակավայրերում նոր կանգառների կառուցման անհրաժեշտություն կա: Համայնքի Հաղպատ և Սանահին գյուղերում են գտվում ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում ներառված Սանահինի և Հաղպատի Վանակին համալիրները, ուր այցելող մեծաթիվ զբոսաշրջիկներ օգտվում են հասարակական տրանսպորտից, որոնց կայանատեղիներում չկան կանգառներ: Սա ևս մեկ անհարմարություն է թե համայնքի բնակիչների և թե համայնք այցելող զբոսաշրջիկների համար:

Բացի վերոնշյալից ամեն տարի համայնքում առաջնային խնդիր է դառնում ներհամայնքային ճանապարհների անցանելի պահելը: Այս խնդրի լուծման նպատակով ամեն տարի կատարվում են փոսային նորոգման աշխատանքներ: 2019 թվականին 2500մ² փոսալցման աշխատանքները ևս նախատեսվում է իրականացնել այս ծրագրի շրջանակներում:

Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին

Ալավերդի համայնքի հնգամյա զարգացման ծրագրի տրանսպորտ-ճանապարհաշինություն բաժնում որպես գերակա խնդիրներ են նշվել ճանապարհների գերմաշվածությունը, մայթերի և ներհամայնքային ճանապարհների անանցանելիությունը: Այս խնդիրների լուծմանն է ուղղված ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացումը:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքում համայնքը կունենա բարեկարգված ենթակառուցվածքեր, ինչի արդյունքում կհասնենք ծրագրի իրականացման նպատակին, այն է՝ կկանխվեն դժբախտ պատահարները և կապահովվի համայնքի բնակիչների ու համայնք այցելած զբոսաշրջիկների անվտանգ երթևեկությունը:

Ճանապարհների վերանորոգումը նաև հնարավորություն կընձեռնի բնակիչներին խնայել էական ֆինանսական միջոցներ (մեքենաների վերանորոգման վրա

	կատարվող ծախսերը): Ծրագրով նախատեսված արդյունքներին հասնելու համար անհրաժեշտ աշխատանքների իրականացման ընթացքում համայնքում շինարարության ոլորտում կստեղծվեն շորջ 20 ժամանակավոր աշխատատեղեր: Ծրագրի կյանքի կոչվելու պարագայում համայնքի Թումանյան փողոցը բարեկեցիկ կդառնա նաև զբոսաշրջիկների համար, ինչը կնպաստի համայնքում զբոսաշրջության զարգացմանը:
Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները	Ծրագրով նշված արդյունքերին հասնելու համար նախատեսվում է վերանորոգել Թումանյան փողոցի 27150մ² մայթերը, համայնքի կանգառները, կատարել 2500մ² փոսալցում և կառուցել 10 նոր կանգառներ: Այս աշխատանքները կյանքի կոչելու համար՝ ➢ համայնքապետարանը 2019 թվականի բյուջեով կնախատեսի անհրաժեշտ ֆինանսական միջոցներ, ➢ համայնքը կստանա ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ, ➢ համայնքապետարանի համապատասխան աշխատակիցների կողմից Գնումների մասին ՀՀ Օրենքին, գնումների հետ կապված ՀՀ Կառավարության որոշումներին և օրենսդրական այլ ակտերին համապատասխան, կկազմակերպվի նախ այդ աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման, ապա, այդ փաստաթղթերին համապատասխան, աշխատանքների կատարման գնման գործընթաց, ➢ կկատարվեն ծրագրով նախանշված աշխատանքները, ➢ կապահովվի աշխատանքների տեխնիկական և հեղինակային վերահսկողություն, ինչպես նաև վերահսկողություն համայնքապետարանի համապատասխան բաժնի աշխատակիցների կողմից, ➢ աշխատանքների ավարտից հետո շինարարական կազմակերպության /կազմակերպությունների/, համայնքապետարանի, տեխնիկական, հեղինակային վերահսկողների և նախագիծը կազմողների միջև կիրականացվեն հանձման-ընդունման աշխատանքներ, ➢ համայնքում կունենանք վերանորոգված և նոր կառուցված ենթակառուցվածքներ:
Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում	Թումանյան փողոցի մայթերը, համայնքում գտնվող կանգառները և համայնքի ավտոճանապարհները սեփականության իրավունքով պատկանում են Ալավերդու համայնքապետարանին: Այս ենթակառուցվածքների նորոգման, ինչպես նաև նոր կանգառների կառուցման համար կկատարվեն կապիտալ բնույթի ծախսեր, ինչի արդյունքում համայնքապետարանի համապատասխան փողոցների ավտոճանապարհների արժեքը կավելանա 20200000 ՀՀ դրամով, Թումանյան փողոցի մայթերինը՝ 27150000 ՀՀ դրամով, առկա կանգառներինը՝ 2200000 ՀՀ դրամով, և համայնքում կստեղծվեն նոր համայնքապատկան հիմնական միջոցներ՝ կանգառներ՝ 4000000 ՀՀ դրամ արժեքով:
Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա	Ծրագրի հիմնական շահառուները Ալավերդի համայնքի 24599 բնակիչներն են և համայնք այցելող շուրջ 200 000 զբոսաշրջիկները: Ծրագրով նախատեսվող հիմնական աշխատանքները իրականացվելու են համայնքի Թումանյան փողոցում, որը հանդիսանում է Ալավերդու կենտրոնական փողոցներից մեկը: Թումանյան փողոցը բանուկ է, քանի որ այստեղ են տեղակայված մի քանի տասնյակ սպասարկող կազմակերպություններ, ձեռնարկություններ: Այդ թվում՝ մեկ տասնյակից ավելի կրպակներ, խանութներ, թվով 2 բանկ, 2 վարկային կազմակերպություն, ՀՀ

ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժինը, Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի Ալավերդու նստավայրը, ՀՀ ԱԳԿԿ «Ալավերդի» սպասարկման գրասենյակը, Զբաղվածության պետական գործակալության Ալավերդու զբաղվածության տարածքային կենտրոնը և այլն, որոնցում աշխատողների և դրանց մատուցած ծառայություններից օգտվողների համար ծրագրի իրականացման դեպքում մայթերը կդառնան հարմարավետ և նրանք կկարողանան անվտանգ երթևեկել:

Ճանապարհների ընթացիկ նորոգման դեպքում էլ համայնքի բնակիչները կտնտեսեն այդ ճանապարհներում վնասվող ավտոմեքենաների վերանորոգման համար պարբերաբար ծախսվող ֆինանսական միջոցներ:

Իսկ համայնք այցելող զբոսաշրջիկները կօգտվեն ավելի բարեկարգ ենթակառուցվածքներից՝ ճանապարհներից, մայթերից և կանգառներից, որը կխթանի համայնքում զբոսաշրջության զարգացումը:

Ծրագրի իրականացման ընթացքում և արդյունքում ստեղծվող աշխատատեղեր

Ծրագրի իրականացման ընթացքում կստեղծվեն ժամանակավոր աշխատատեղեր շինարարության ոլորտում՝ փոսալցման աշխատանքների, մայթերի վերանորոգման, կանգառների վերանորոգման և նոր կանգառների կառուցման աշխատանքները իրականացնելու համար:

Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը

2018 թվականի Ալավերդի համայնքի փաստացի բյուջեն՝ 705797,2 հազար դրամ է.

	Պլանը	*Փաստացին*	*Տոկոսը*
Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները	***734782.6***	***705797.2***	***96.1***
Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները *այդ թվում՝՝*	727588,6	698603.2	96,0
Վարչական բյուջեի մուտքեր	591737,4	571185,6	96,5
Վարչական բյուջեի եկամուտներ -, որից՝	591737,4	571185,6	96,5
- Սեփական եկամուտներ	171529,1	154328,2	89,97
Ֆոնդային բյուջեի մուտքեր	143045,2	134611,6	94,1
-Ֆոնդային բյուջեի եկամուտներ	135851,2	127417,6	93,8
Ազատ մնացորդ	7194,0	7194,0	100
Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, *որից՝*	734782,6	679862,6	92,5
- Վարչական բյուջեի ծախսեր	591737,4	569231,9	96,2
-Ֆոնդային բյուջեի ծախսեր	143045,2	110630,7	77,3
Համայնքի ֆոնդային բյուջեի ծախսերը, (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր) *որից՝*	195103,4	164343,1	84.1
- Ճանապարհային տնտեսություն	38146,4	28668,7	75.1
- Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	3835,8	3412,2	85.96
- Հանգիստ, մշակույթ և կրոն	57,2	33,3	58.21

- *Կրթություն*	2806,6	2601,3	92.7
- *Տրանսպորտի գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ*	1071,9	951,2	88.7
- *Բնակարանային շինարարարության և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ*	270,0	216,0	80.0
- *Շրջակա միջավայրի պաշտպանություն*	135851,2	126084,3	92.8
- *Փողոցների լուսավորում*	11164.0	562,5	5.0
- *Գյուղատնտեսություն*	1900,3	1813,6	95.4

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն

Ալավերդի համայնքի 2019 թվականի բյուջեն (ծախսերը) 713075.3 հազար դրամ է.

	Պլանը
Ընդհամենը համայնքի բյուջեի մուտքեր	***713075,3***
Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում *այդ թվում՝՝*	688903,4
- *Վարչական բյուջեի մուտքեր*	627120,6
- *Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝*	627120,6
- *սեփական եկամուտներ*	170571.2
- *Ֆոնդային բյուջեի մուտքեր*	85954,7
- *Ֆոնդային բյուջեի եկամուտներ*	61782,8
- *Ազատ մնացորդ*	24171,9
Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, *որից՝*	713075.30
- *Վարչական բյուջեի ծախսեր*	727120.6
-*Ֆոնդային բյուջեի ծախսեր*	85954.7
Համայնքի ֆոնդային բյուջեի ծախսերը, (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր) *որից՝*	90954,7
- *Ճանապարհային տնտեսություն*	18601,9
- *Հանգիստ, մշակույթ և կրոն*	800,0
- *Տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ*	520,0
- *Շրջակա միջավայրի պաշտպանություն*	59713,6
- *Շրջակա միջավայրի պաշտպանության գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ*	2069,2
- *Փողոցների լուսավորում*	7350,0
- *Գյուղատնտեսություն*	1900,0

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար կատարվելու են կապիտալ բնույթի ծախսեր, որոնք պետք է վճարվեն համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերից:

բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով	Ալավերդի համայնքի 2019 թվականի ֆոնդային բյուջեն ծախսերի մասով 90954700 ՀՀ դրամ է: Այս ծախսերից՝ 61782800 ՀՀ դրամը Ալավերդի համայնքի բնապահպանական ծրագրերի իրականացման համար տրամադրվող սուբվենցիայի գումարներ են, որոնք տրամադրվում են նպատակային օգտագործման համար և չեն կարող օգտագործվել ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար: 7350000 ՀՀ դրամ գումարը 2018 թվականին կատարված լուսասյուների ձեռքբերման և տեղադրման աշխատանքների համար նախատեսված վճարումներ են: Մնացած գումարը բավարար չէ ծրագրով պլանավորված և *55405000 ՀՀ* դրամ արժողությամբ աշխատքնաների իրականացման համար:
Ծրագրի ընդհանուր բյուջեն	*55407000 ՀՀ դրամ*
Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը	*25000000 ՀՀ դրամ (45.12%): Համայնքապետարանի 2019 թվականի բյուջեի ֆոնդային մասով նախատեսված ծախսերով ներկայում պլանավորված գումարները չեն բավարարում ծրագրով նախատեսված համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի համար: Սակայն տարվա 2-րդ կեսին ակնկալվում են հողի իրացումից մուտքեր, որն էլ կապահովվի համայնքի մասնաբաժնի չբավարարող մասը:*
Այլ ներդրողներ	
Ծրագրի իրականացման տևողությունը	*Սկիզբը 01.07.2019թ.* *Տևողությունը 5 ամիս*
Ծրագրի ծախսերը	Ծրագրով նախատեսվում է կատարվելիք աշխատանքների իրականացման համար ձեռք բերել ՀՀ օրենսդրությամբ սահմանված նախագծանախահաշվային փաստաթղթեր, որի արդյունքում հաշվարկները կլինեն ավելի մանրամասը: Մինչ այդ Ալավերդու համայնքապետարանի համապատասխան բաժնի կողմից կատարվել են նախնական հաշվարկներ, ըստ որի անհրաժեշտ է 55407000 ՀՀ դրամ՝

Անվանում	Չափման միավոր	Քանակ	Միավորի գին (հազար դրամ)	Ընդամենը (հազար դրամ)
Թումանյան փողոցի մայթերի վերանորոգում	$մ^2$	2715	10,00	27150,00
Թումանյան փողոցի մայթերի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերում				950,0
Ալավերդի համայնքի բնակավայրերում կանգառների կառուցում	հատ	10	400,0	4000,00
Ալավերդի համայնքի բնակավայրերում կանգառների կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերում				140,00
Ալավերդի համայնքի փողոցների փոսալցման աշխատանքներ	$մ^2$	2500	8,80	20200,00

	Ալավերդի համայնքի փողոցների փոսալցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերում				690,00
	Ալավերդի համայնքի կանգառների վերանորոգում				2200,00
	Ալավերդի համայնքի կանգառների վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերում				77,00
	Ընդամենը				**55407,00**

Ամսաթիվ *06.03.2019թ*

Համայնքի տնտեսական պատասխանատու՝ Կարինե Սիմոնյան
Հեռախոսահամարը՝ 091899154, **էլեկտրոնային փոստը՝** karine-1702@mail.ru

Համայնքի ղեկավար Ս. Խ. Սասուն Խեչումյան
(անունը, ազգանունը)

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՏՆՏԵՍԱԿԱՆՆՍՈՑԻԱԼԱԿԱՆԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻԶԱՐԳԱՑՄԱՆՆՈՒՂՂՎԱԾՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԻ՝ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1. Թումանյան փողոցի մայթերի վերանորոգում

Աշխատանքը դասվում է ռիսկայնության առաջին կատեգորիային

Նախատեսվում է վերանորոգել 1.5-1.8 մ լայնությամբ և 1.6 կմ երկարությամբ ներհամայնքային մայթեր:

- *Մայթերի հին ասֆալտբետոնե ծածկույթի քանդում*
- *Հին ծառերի արմատների հանում*
- *Մետաղական խոզանակներով և օդափչման միջոցով մաքրում շինանյութի մնացորդներից և փոշուց*
- *Խճային հիմքի կառուցում տոփանումով*
- *Հարթեցում*
- *Ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում (h-5սմ): Տեղադրվող ասֆալտբետոնի ջերմաստիճանը պետք է լինի 120°-150°C:*

2. Ալավերդի համայնքի բնակավայրերում կանգառների կառուցում

Նախատեսվում է կառուցել 10 հատ մետաղական հիմնակմախքով կանգառներ: Մեկ կանգառի չափերն են՝ 5.0-1.5մ: Բարձրությունը՝ 3.0 մ:

- *Ասֆալտբետոնե ծածկույթի քանդում հիմքերի համար*
- *Հիմքերի բետոնացում*
- *Պողպատե խողովակներից կանգառների կառուցում*
- *Փայտե նստարանների կառուցում*
- *Կանգառների երեսապատում*
- *Մետաղական և փայտե էլեմենտների յուղաներկում*

3. Ալավերդի համայնքի փողոցների փոսալցման աշխատանքներ

Նախատեսվում է վերանորոգել 2500մ² ներհամայնքային փողոցներ

Աշխատանքը դասվում է ռիսկայնության առաջին կատեգորիային

- *Նորոգման ենթակա տեղերի կավիճով եզրագծում փողոցի առանցքին ուղղահայաց և զուգահեռ գծերով, այնպես որ նրանք ընդգրկեն պատվածքի չքայքայված հատվածը 3-5սմ լայնությամբ*
- *Հին ասֆալտբետոնե ծածկույթի քանդում(նշված գծերով քանդված հատվածները կտրվում են հետդարձ մուրճերով)*
- *Վնասվածքների եզրերըկտրելուց հետո ստացված «արկղերի», մետաղական խոզանակներով և օդափչման միջոցով, մաքրում շինանյութի մնացորդներից և փոշուց*
- *Խճային հիմքի կառուցում տոփանումով*
- *Հարթեցում*
- *Ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում (h-5սմ): Ճանապարհների պատվածքների փոսային նորոգումները պետք է կատարվեն տաք ասֆալտբետոնային խառնուրդներով, մոտավորապես նույն կազմով, ինչպիսին ունի ինքը պատվածքը: Կտրված տեղերը, պատերը և հատակը պատվում են այնպիսի կապակցող նյութի բարակ շերտով, ինչպիսիք օգտագործվում են պատվածքի պատրաստման ժամանակ: Տեղադրվող ասֆալտբետոնի ջերմաստիճանը պետք է լինի 120°-150° C,իսկ քանակը և տեսակը հաշվի առնելով խտացման գործակիցը:*

4. Ալավերդի համայնքի կանգառների վերանորոգում

- *Վնասված պողպատե խողովակների ապաամոնտաժում և նորի տեղադրում*
- *Փայտե նստարանների վերանորոգում*
- *Կանգառների պոլիկարբոնատով երեսապատվածքի փոխարինում նորով*
- *Մետաղական և փայտե էլեմենտների յուղաներկում*

Ալավերդի համայնքի ղեկավար Ս. Խեչումյան

Քաղաքաշինության, գյուղ. և բնապահպ. բաժնի
գլխավոր մասնագետի պաշտոնակատար Վ. Մինասյան